

ՍԱՍ 4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2007-2009թ. տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների ներդրման աշխատանքներն իրականացվել են Եռամյա ծրագրին և Խորհրդի կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

Ծառայության կորպորատիվ համակարգչային ցանցի կառուցմամբ պայմանավորված, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցի արդիականացման աշխատանքները: Ցանցին միացվել են գործող և տեխնիկական պահանջներին համապատասխանող բոլոր (թվով 190) համակարգիչները: Ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցերի ստեղծման, ընդլայնման և արդիականացման աշխատանքները. 9 մարզային գործակալությունում ընդլայնվել են տեղային համակարգչային ցանցերը: 4 կետով ընդլայնվել է մոդեմային կապը և 12 կետում կարգավորվել:

Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում «Վինդոուս-2000» սերվերի կառավարմամբ շահագործվել է «ԷՆԷՆԵՍ Դոմեյն» դոմեյնային միջավայրը, որն ապահովել է ցանցի կենտրոնացված կառավարումը և ցանցի աշխատանքի հուսալիությունը: Կառուցվածքային ստորաբաժանումներում կատարվել է համակարգիչների հակավիրուսային ծրագրերի կենտրոնացված արդիականացում: Ծառայության աշխատակազմի մարդահամարի վարչությունում 27 համակարգիչ միացվել են համակարգչային տեղային ցանցին և տեղակայվել անհրաժեշտ ծրագրային փաթեթներ և կենտրոնացված կառավարումով հակավիրուսային ծրագրեր:

Շարունակվել է www.armstat.am Ծառայության պաշտոնական ինտերնետային և www.armstat.info (հայելային արտապատկերը) կայքէջերի վարումը:

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը բավարարելու, վիճակագրական տեղեկատվությունից օգտվելն առավել մատչելի դարձնելու, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվությունների շրջանակն ընդլայնելու նպատակով 2007թ. մշակվեց ինտերնետային կայքէջ՝ նոր տեխնոլոգիայի և ծրագրային ապահովման օգտագործմամբ: 2008թ. մայիսի 1-ից շահագործվել է Ծառայության նոր պաշտոնական ինտերնետային կայքէջը: Ի լրումն առկա բաժինների, նոր կայքը համալրվել է նաև նոր բաժիններով (օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության զարգացման նպատակներ», Կայքի քարտեզ և այլն): Կարևորելով «Միջազգային համագործակցություն» բաժնի դերը, այն տեղակայվել է կայքի գլխավոր էջում: Կայքի գլխավոր էջում ստեղծվել է «տվյալների բազաներ» բաժինը, որը բաղկացած է երեք ենթաբաժիններից՝ արտաքին առևտրի տվյալների բազա, ազգային հաշիվների բազաներ, տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքով միկրոտվյալների բազա:

Վարվել է ինտերնետային կայքէջում տեղակայված գրադարանի էլեկտրոնային անվանացանկը:

Հաշվետու ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ Ծառայության ինտերնետային կայքէջում տեղադրվել է թվով 658 վիճակագրական նյութ (այդ թվում՝ 2007թ.՝ 193, 2008թ.՝ 225, 2009թ.՝ 240):

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ շահագործվել են թվով 72 տվյալների բազաներ, ստեղծվել են վիճակագրական տարբեր ոլորտների տվյալների մշակման 9 նոր համալիրներ (այդ թվում՝ ըստ տարիների. 2007թ.՝ 5, 2008թ.՝ 3, 2009թ.՝ 1), կատարվել թվով 233 փոփոխություններ (այդ թվում՝ ըստ տարիների. 2007թ.՝ 60, 2008թ.՝ 90, 2009թ.՝ 83): Մշակվել են ծրագրեր հաշվապահական հաշվառման և անձնակազմի գործերի կառավարման համար:

«ԷսԶյուԷլ-2000» սերվերի վրա վարվել է դասակարգիչների բազան, որը ներառել է վարչատարածքային բաժանման, արտադրանքի դասակարգիչ ըստ գործունեության տեսակների, տնտեսական գործունեության տեսակների և այլ դասակարգիչները:

2009թ. մշակվել է Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) ցուցանիշների տվյալների բազա՝ հայերեն և անգլերեն, DevInfo 6.0 տվյալների բազաների համակարգի օգտագործմամբ: Նոր ստեղծված տվյալների բազայում մուտքագրվել են 1999-2008թթ. ՀՁՆ ցուցանիշները: Ստեղծված ՀՁՆ բազան ուղարկվել է DevInfo ծրագրը սպասարկող խմբին www.DevInfo.info ինտերնետային կայքէջում տեղակայելու համար:

Վիճակագրական տվյալների հիմնապաշարների (Վերհաուզ) մշակման աշխատանքների շրջանակում ֆինանսների, արդյունաբերության և տրանսպորտի վիճակագրության ոլորտներում շարունակվել են կառուցվածքի մշակման և սերվերում տեղադրման տվյալների աղյուսակների աշխատանքները: Մշակվել է ծրագիր տեղային տվյալների բազաներից վիճակագրական տվյալների հիմնապաշար տեղեկատվության տեղափոխման համար, արդիականացվել է վիճակագրական տվյալների ստացման համար նախատեսված ծրագիրը:

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների և վիճակագրական տեղեկությունների տրամադրողների կողմից կիրառելու և աշխատանքների օպերատիվության ապահովման նկատառումներով պայմանավորված, 68 կազմակերպությունների տրամադրվել են 3 պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման համար էլեկտրոնային տարբերակները: Ծառայության առանձնացված ստորաբաժանումներում շահագործվել են 15 ծրագրա-տեխնոլոգիական համալիրներ:

Հրապարակումների համար ստեղծվել են 77 քարտեզներ «Արբ-Վյու-8» քարտեզագրական ծրագրային փաթեթի կիրառմամբ, այդ թվում՝ 2007թ.՝ 33, 2008թ.՝ 22, 2009թ.՝ 22:

Ծառայության աշխատակազմի աշխատակիցների հետ անցկացվել է աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (GIS) և ԷսՓիԷսԷս ծրագրային փաթեթների ուսուցում:

Շարունակվել են վիճակագրական տեղեկատվության էլեկտրոնային արխիվացման աշխատանքները:

Իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների տեղային համակարգչային ցանցերի և համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքի ապահովման ուղղությամբ:

Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի հետ համատեղ ծառայության աշխատակիցների համար կազմակերպվել է 2 սեմինար DevInfo ծրագրային փաթեթի՝ «ԴեվԻնֆո 6.0 Սպառող և տվյալների բազայի կառավարում» (Advanced Database Management and Web Enabeling a Database) և «ԴեվԻնֆո 6.0 տվյալների բազայի կառավարում» (DevInfo Database Administration) ուսուցման նպատակով: